«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Դաստիարակ՝ Անի Ղուկասյան

Մանկապարտեզ՝ «Սիսիանի թիվ 3» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ——————————————————————————————— 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. Էքսկուրսիան որպես կրթադաստիարակչական գործունեության ձև----- 5

1.1 Էքսկուրսիաների՝ կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու մեթոդները-------- 7

1.2 Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում- 11

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. Ճանաչողական էքսկուրսիա համո սահյանի տուն- թանգարան -------- 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 18

ՀԱՎԵԼՎԱԾ---------- 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման իսկական առարկան մարդուն

Նախապատրաստելն է մարդ լինելու համար:

Նիկոլայ Պիրոգով

Նախադպրոցական տարիքը անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է, ուստի շատ կարևոր է, թե այս շրջանում երեխային ինչ է պետք սովորեցնել, հաղորդել և առավել կարևոր է, թե ինչպես, ինչ մեթոդներով ու ձևերով դա անել: Թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ խիստ կարևորում ենք մշակութային այցերի, էքսկուրսիաների և առհասարակ մշակույթի դերը երեխայի ընդհանուր զարգացման, աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայնման, տրամաբանական մտածողության գործում: Աճող սերնդին մեր մշակույթին ծանոթացնելը կարևորագույն խնդիր է: Ն/դ տարիքի յուրաքանչյուր երեխա հետաքրքրասեր և անհագ է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ և սպունգի պես կլանում է գիտելիքները: Այս տարիքում ամեն ինչ հետաքրքիր է երեխային և նա ակտիվորեն ընկալում է աշխարհը, հետևաբար երեխայի տարիքային այս առանձնահատկությունը պետք է առավելագույնս ճիշտ օգտագործվի ուսումնական հաստատությունում իրականացվելիք կրթադաստիարակչական գործունեության ընթացքում: Հենց այս ժամանակահատվածում կարևոր է երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի, բնության նկատմամբ, հետաքրքրություն առաջացնել նրա մշակութային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումները անձի, հասարակության մասին: Այսպիսի կարողունակությունների ձևավորմանը մեծապես նպաստում են պարբերաբար կազմակերպվող էքսկուրսիաները և մշակութային այցերը: Ուսումնական և դաստիարակչական այս առանձնահատուկ ձևը հնարավորություն է տալիս բնական պայմաններում դիտարկել առարկաները և երևույթները: Միաժամանակ երեխայի մոտ ակտիվացնում է մտավոր ակտիվությունն ու հուզական ոլորտը: Էքսկուրսիաներն ու մշակութային այցերը տեսարժան վայրերի, թանգարանների, գրադարանների, թատրոնների, արտադրական ձեռնարկությունների, պատմամշակութային կոթողների և բնության

գիրկ այցելություններն են՝ ուսումնադաստիարակչական նպատակներով: Էքսկուրսիաների էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համակցության մեջ: Այն զննական մեթոդ է : Էքսկուրսիաները և մշակութային այցերը գործունեության այն ձևերն են, որոնք երեխաներին իսկապես դուր են գալիս:

Թեմայի արդիականությունը. Մեզ բախտ է վիճակվել աշխատել 21-րդ դարի ուսումնական հաստատությունում, ինչը մեզանից պահանջում է անընդհատ նոր մոտեցումների, առավել ռացիոնալ մեթոդների է գործունեության ավելի հետաքրքրաշարժ ու ժամանակակից ձևերի կիրառում արդի ուսուցումը կյանքի հետ կապելու, ուսուցման, դաստիարակման մեթոդներն ու ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով: Հենց այդպիսի գործունեության ձևերից մեկն էլ էքսկուրսիաներն ու մշակութային այցերն են:

Համապատասխանությունը նոր չափորոշչի և ծրագրի պահանջներին. Ըստ նոր ծրագրային՝ պահանջների գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ պետք է լուծել սանի ֆիզիկական, մտավոր, բարոյական աշխատանքային, տնտեսագիտական, իրավական, էկոլոգիական, սեռային, գեղարվեստագեղագիտական դաստիրակության խնդիրները, և, ըստ այդ գործունեության ձևերի, այդ խնդիրներից շատերն իրականացվում են արտամանկապարտեզային պայմաններում: Եվ հենց այստեղ է, որ շատ մեծ ու կարևոր է էքսկուրսիաների ու մշակութային այցերի ընձեռած հնարավորությունները, քանի որ գործունեության այս ձևով ապահովվում է նոր չափորոշչի ոլորտային վերջնարդյունքներից շատերը:

Նպատակը. Նկատի ունենալով թեմայի արդիականությունը, շատ կարևորելով ուսուցման ու դաստիարակության տվյալ գործունեության ձևը, հետազոտական աշխատանքի կատարումը նպատակ ունի տեսական նյութի ուսումնասիրմամբ, էքսկուրսիաների և մշակութային այցերի փորձից, ևս մեկ անգամ կարևորել գործունեության այս ձևը, ներկայացնել դրանց արդյունավետությունը՝ սանի զարգացման գործում, կատարել առաջարկներ, որոնք կնպաստեն դրա ակտիվացմանը:

ԳԼՈՒԽ 1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Կրթության և դաստիարակության ձևերի և մեթոդների շարքում, երբ ուսումնասիրում ենք որևէ կրթական ծրագիր կամ մեթոդական ձեռնարկ ուղեցույց, ապա շատ դեպքերում առաջին տեղում էքսկուրսիան է: Պատմությունը չի պահպանել հիշատակում, թե երբ և ում կողմից է իրականացվել առաջին էքսկուրսիան ընդհանրապես, բայց մենք հաստատ գիտենք, որ որպես ուսումնական մեթոդ, էքսկուրսաները սկսեցին ներմուծվել կրթական գործընթաց Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի մանկավարժների կողմից 18-ի դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Ուսուցման այս ամենահետաքրքիր ձևի անվանումը գալիս է լատիներեն՝ «էքսկուրսիա» բառից, այն ի սկզբանե նշանակում էր «արշավանք»: Էքսկուրսիան կրթական կամ ժամանցային նպատակով կազմակերպված կոլեկտիվ ուղևորություն, զբոսանք, շրջագայություն է դեպի բնություն, արդյունաբերական կամ կրթական կառուցներ, տեսարժան վայրեր:

Էքսկուրսիայի էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համադրության մեջ: Եթե այդ համադրությունից բացակայի ցուցադրումը, ապա այն կվերածվի պարզապես զրույցի: Իսկ եթե էքսկուրսիան զուրկ լինի բացատրությունից, ապա ցուցադրումն էլ իր հերթին կվերածվի ուղղակի տեսարժան վայրի այցելության:

Ուսուցման կազմակերպման այս ձևը կիրառելի է նաև ն/դ ուսումնական հստատություններում, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց: Հետևաբար ուսումնադաստիարակչական գործընթացում գիտելիքի հաղորդումը ցանկալի է պարբերաբար կատարել էքսկուրսիաների միջոցով նկատի ունենալով, որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ գիտելիքի աշխույժ խետաքրքիր փոխանցումը ավելի դառնում:Այն ինչը տեսնում է սանը, տպավորվում է նրա գիտակցության մեջ դաստիարակի պատմածի, բացատրածի որոշակի իրադրությունների, երևույթների , փաստերի, շնորհիվ: Դաստիարակը, ցուցադրելով միաժամանակ սովորեցնում է ճիշտ ընկալել տեսածը: Այսպիսով՝

էքսկուրսիաները օգնում են ն/դ տարիքի սաներին պատկերացում կազմել շրջապատող աշխարհի մասին հենց լսածը տեսնելու, վերացականը ակնառու-պատկերավորի փոխարինելու որոշակի իրադարձությանը մասնակից լինելու միջոցով:

1.1 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ՝ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Էքսկուրսիայի ընթացքում մանկապարտեզի դաստիարակը կիրառում մանկավարժական հատուկ տեխնիկա և մեթոդներ:

Էքսկուրսիան բնույթով աշխույժ է և հուզիչ, դաստիարակը պետք է խուսափի պաշտոնական ուսուցումից: Էքսկուրսիայի ընթացքում դաստիարակի՝ սաների հետ շփվելու ոճը պետք է լինի ավելի անկեղծ ու նուրբ: Սաները պետք է գիտելիք ձեռք բերեն առանց նույնիսկ դա գիտակցելու:

Էքսկուրսիայի բովանդակությունը պարտադիր պետք է համապատասխանի երեխաների տարիքին և հետաքրքրություններին: Պետք է սահմանափակվի՝ առարկաների թիվը, որոնց վրա կենտրոնացված է ուշադրությանը: Յուրաքանչյուր տարիքային խումբ ունի էքսկուրսիաների իր առանձնահատկությունները:

Կազմակերպչական պահեր

Իհարկե, էքսկուրսիա կազմակերպելը ավելի դժվար է, քան ավանդական խմբային պարապմունքի: Նրա հաջողությունը կախված է դաստիարակի պատրաստվածությունից: Դաստիարակը նախօրոք մտածում է միջոցառման բոլոր պահերի մասին (ներառյալ ճանապարհին անցկացրած ժամանակը), որոշում է իր հետ վերցնել օգնական (դայակ, մեթոդիստ, մեկ այլ ուսուցիչ, ծնողներից մեկը):

Որքան էլ դաստիարակին ծանոթ լինի էքսկուրսիայի վայրը, նա նախապես զննում է էքսկուրսիայի վայրի և անհրաժեշտության դեպքում պատրաստում անհրաժեշտ նյութեր (օրինակ զամբյուղներ՝ այգի այցելելու համար, թուղթ, մատիտ և այլն): Լավ է երեխաներին ներգրավել անհրաժեշտ նյութերի պատրաստմանը, դա կօգնի հետաքրքրություն առաջացնել գալիք իրադարձության նկատմամբ: Նա նաև սահմանում է էքսկուրսիայի առանձին մասերի անցկացման հաջորդականությունը, վայրերը կոլեկտիվ և առանձին դիտարկումների և հանգստանալու համար:

Կարևոր է նաև ճիշտ ընտրված ուղին դեպի դիտարկման օբյեկտ՝ այն չպետք է հոգնեցուցիչ լինի և սաներին շեղի ծրագրված նպատակից: Ընտրված ուղին պետք է լինի 2-5 կմ (կախված սաների տարիքային խմբից և ֆիզիկական հնարավորություններից): Դեպի ընտրված վայր (միակողմանի) ճանապարհորդության տևողությունը միջին խմբում չպետք է գերազանցի 30 րոպե, ավագ խմբում՝ 40-50 րոպեն: Իհարկե, պետք է հաշվի առնել եղանակային պայմանները և ճանապարհի առանձնահատկությունները:

Դաստիարակը ուշադրություն է դարձնում նաև սաների հագուստին, դրանք պետք է համապատասխանեն տարվա եղանակին և վայրին:

Էքսկուրսիային մասնակցող երեխաների թիվը կրկին կախված է նրանց տարիքից, որքան փոքր են երեխաները, այնքան փոքր պետք է լինի նրանց թիմը: Այսպիսով, կրտսեր նախադպրոցական մակարդակում նպատակահարմար է իրականացնել գործողություններ 6- 12 հոգուց բաղկացած ենթախմբի հետ:

Եթե էքսկուրսիան ենթադրում է տրանսպորտով ճանապարհորդություն, ապա դաստիարակը և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարությունը պետք է նախապես պատրաստեն համապատասխան փաստաթղթերը (պատվեր, անվտանգության ճեպազրույց, նախադպրոցականների ցուցակ և այլն), իսկ եթե որևէ արտադրամաս կազմակերպություն կամ հաստատություն են այցելելու, ապա պետք է համապատասխան պայմանավորվածություն ձեռք բերեն, զեկուցեն և ստանան թույլտվություն:

Էքսկուրսիայի անցկացման մեթոդները.

Էքսկուրսիաների կազմակերպման և անցկացման մեթոդներին ներկայացվող պահանջները.

- ✓ Բովանդակության համապատասխանությունը երեխաների հետաքրքրություններին,
- ✓ Թեմային ուղղված լինելը (ոչ մի պատահական երևույթ չպետք է շեղի սանի ուշադրությունը հիմնականից,

- ✓ Չպետք է ունենա պարապմունքի ավանդական ձև,
- ✓ Դաստիարակի նախապատրաստում,
- ✓ Նախապես որոշել այն խոսքի ձևերը, որոնք առաջարկվելու են,
- ✓ Էքսկուրսիայից հետո դիտել նկարներ, վարել զրույց, դիդակտիկ խաղ, նկարել տպավորությունները,
- ✓ Էքսկուրսիաների քանակի պլանավորել:

Էքսկուրսիա կազմակերպելիս և անցկացնելիս պետք է հիշել, որ նույնիսկ հետաքրքիր տեղեկատվության մեծ քանակությունը հանգեցնում է ուշադրության թուլացման: Առաջարկվում են նախադպրոցական տարիքի երեխաների ուշադրությունը պահպանելու հետևյալ եղանակները.

• Տեսարժան վայրերի ցուցադրում, որոնք պետք է տարբերվեն ճշգրտությամբ, պատկերավորությամբ:

• Տեսողական միջոցների օգտագործում՝ դրանք օգտագործելիս լսողական ընկալումն անցնում է տեսողականի, ստեղծվում է սթրեսի որոշակի թուլացում:

• Կատակներ, հումոր:

• Հարց-պատասխան

Էքսկուրսիան հետաքրքիր լինելու համար ուսուցիչը պետք է պատրաստի բանաստեղծություններ, հանելուկներ, ասացվածքներ, խաղեր:

էքսկուրսիայի կառուցվածքը

Էքսկուրսիա մշակելիս կարևոր է առաջադրել և լուծել ուսումնական, կրթական և զարգացնող խնդիրներ՝ ելնելով ծրագրի պահանջներից և շրջակա տարածքի առանձնահատկություններից:

- ✓ ներածական զրույց,
- ✓ կոլեկտիվ դիտարկում,
- ✓ երեխաների անհատական ինքնագործունեություն,
- ✓ նյութերի հավաքածու,

- ✓ մանկական խաղեր հավաքված նյութով,
- ✓ եզրփակիչ մասը:

Պատրաստվելով գալիք էքսկուրսիային դաստիարակը նախադպրոցականներին նախապես տեղեկացնում է էքսկուրսիայի նպատակը, թե ուր են գնալու և ինչու, ինչ են պարզելու: Անհրաժեշտ է նաև սաների հետ քննարկել անծանոթ վայրում վարքի կանոնների պահպանման մասին:

Հիմնական մասում՝ բացի դաստիարակի ցուցադրումներից, տեղեկտվության տրամադրումից պետք է սաներին նաև հնարավորություն տալ բավարարել իրենց հետաքրքրությունը ինքնուրույն և ազատ դիտումներ կատարելով:

Եզրափակիչ փուլի հիմնական նպատակը արդյունքների ամփոփումն է: Էքսկուրսիան ավարտվելուց հետո, դաստիարակն ու սաները պարտադիր վերլուծում և ամփոփում են էքսկուրսիան, ամփոփում են ճանաչողական գործունեության արդյունքները, տալիս են հուզական գնահատական, արտահայտում վերաբերմունքը, տպավորությունները նաև կատարում ստեղծագործական աշխատանք (հատկապես բնության էքսկուրսիայի ընթացքում հավաքված նյութերով):

1.2 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ և ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում չափազանց կարևոր են , քանի որ դրանք ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովում են ուսուցման, զարգացման և դաստիարակման փրխադարձ կապը:

Ուսուցում. Էքսկուրաիաներն ու մշակութային այցերը նպաստում են աշխարհընկալման ու ճանաչմանը , սաների միտքը հարստացնում են նոր տպավորություններով, քանի որ նրանք անմիջականորեն դիտում և ճանաչում են այնպիսի առարկաներ և երեկույթներ, ինչպիսիք հնարավոր չէ բերել մանկապարտեզ տեսնել առօրյայում: Այն հետաքրքրություն է առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, հասարակական երևույթները, մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ, այսպիսով նախադպրոցականները՝ստանում են նոր գիտելիքներ՝ որոշակի թեմայի վերաբերյալ՝ ընդլայնելով մտահորիզոնը:

Բացի աշխարհընկալման զարգացումից, էքսկուրսիաները բացառիկ նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման առումով, քանի որ դրանք խթանում են հաղորդակցվելու ցանկությունը հարստացնում բառապաշարը, կապակցված խոսքը, երկխոսելու ունակությունները:

Հայտնի ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին , գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարզանում է, եթե մտքի առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի [2]: ՈՒ այլ կերպ հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի և մշակութային այցերի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի:

Զարգացում. բոլոր տեսակի էքսկուրսիաները նպաստում են սանի մտածողության զարգացմանը վերլուծելու, ընդհանրացնելու, դասակարգելու և

պատճառահետևանքային կապեր հաստատելու ինչպես նաև ակտիվացնում են սանի ուշադրությունը դիտողականությունը, հիշողությունը զգայական ունակությունները, իսկ թանգարանների, թատրոնների և ճարտարապետական հուշարձանների այցելությունները զարգացնում են ստեղծագործական երևակայությունը, գեղեցիկը տեսնելու և գնահատելու ունակությունը, գեղագիտական ճաշակը:

Էքսկուրսիաները նաև զարգացնում են շարժողական ակտիվությունը:

Դաստիարակում. գործունեության այս ձևը նպաստում է սաների բարոյական, հայրենասիրական դաստիարակությանը, ձևավորում գեղագիտական զգացմունքները և հուզական արձագանք շրջապատի և դրանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ: Էքսկուրսիաները ձևավորում են նաև գիտակցական կարգապահություն և կազմակերպվածություն, վարքի ճիշտ դրսևորումներ դրսում, հասարակական վայրերում, դաստիարակի կարգադրություններին հետևելու և կատարելու ունակություններ:

Նախադպրոցական տարիքի սանի զարգացման համար շատ կարևոր է էքսկուրսիաների բոլոր տեսակների կիրառումը, քանի որ դրանց համադրումը բերում է համակողմանի զարգացման:

Զբոսանք մանկապարտեզում. Թերևս առաջին էքսկուրսիան, որն առաջարկվում է նախադպրոցականներին սովորաբար կրտսեր առաջին և երկրորդ խմբի սաներին) շրջագայությունն է նրանց մանկապարտեզի տարածքում: Այս էքսկուրսիան սաներին սովորեցնում է կողմնորոշվել տարածքում, ծանոթացնում է հաստատության կառուցվածքին դրական վերաբերմունք է զարգացնում աշխատողների նկատմամբ և ձևավորում հարգանք՝ նրանց աշխատանքի նկատմամբ: Սովորաբար երեխաներին ցույց են տալիս խոհանոցը, բժշկական սենյակը, լվացքատունը և այլն՝ նախադպրոցականների ուշադրությունը հրավիրելով աշխատանքային գործիքների, պարագաների ու իրերի վրա:

Բնության էքսկուրսիաներ. Անհիշելի ժամանակներից մարդկությունը՝ գնահատել է բնությունը նրա մեջ տեսնելով ոչ միայն իր կերակրողին, այլև իմաստուն դաստիարակին:Բնության էքսկուրսիաները նպատակ ունեն նախադպրոցականներին ծանոթացնել բնաշխարհին, կուտակել պատկերացումներ նրա տարբեր երևույթների մասին:

Ինչպես հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել « Բնությունն իր բազմապիսի առանձնահատկություններով ու երևույթներով , իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցչին է:Այդ ուսուցիչն ամենահեշտ ու դյուրին ձևով խոր ու կայուն կերպով սովորեցնում է ճանաչել բնությունը»: [3]

Մշակութային այցեր. Բնության էքսկուրսիաներից ոչ պակաս կարևոր են նաև մշակութային այցերը թանգարաններ, հուշարձաններ, գրադարաններ, երաժշտական դպրոցներ, որոնք ընդլայնում են սաների մտահորիզոնը, սովորեցնում հասկանալ ն գնահատել արվեստը, ինչպես նաև ճանաչել հայրենի երկրի պատմությունը: Թանգարանները, գրադարանները կամ գեղարվեստի դպրոցները մշակութային արժեքների պահպանման, անցյալի հիշողությունը, օգտակար տեղեկությունները սերնդեսերունդ փողանցելու միջոց են, իսկ մենք մենծերս պարզապես պարտավոր ենք պահպանել և փոխանցել գիտելիքներն ու մշակութային արժեքները մեր սաներին:

Արտադրական էքսկուրսիաները սաների մոտ զարգացնում են հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ, խթանում՝ հարգալից վերաբերմունք գործարանների և այլ հաստատությունների աշխատողների աշխատանքի նկատմամբ: Նախադպրոցականները տեսնում են ոչ միայն արտադրական գործընթացը, այլև ծանոթանում, թե ինչպես են հասնում արտադրանքի որակին: Իսկ այն, որ արտադրողը պատասխանատու է այս կարևոր ցուցանիշի համար, սաներին հնարավորություն տալիս հասկանալու, թե ինչ է աշխատանքային պատասխանատվությունը: Արդյունաբերական էքսկուրսիաները շատ կարևոր են

նաև հայրենասիրական առումով, երեխաները՝ սկսում են հպարտանալ իրենց քաղաքով և երկրով:

Այսպիսով՝ ***էքսկուրսիաները և մշակութային այցերը*** սանի գեղարվեստաստեղծագործական և ճանաչողական մտածողության ձևավորմանը նպաստող գործունեության ձևերից են: Անկախ նրանից, թե ինչ բնույթ են կրում էքսկուրսիաներն ու մշակութային այցերը, դրանք օժտված են բարձր՝ ազդեցությամբ և արդյունավետությամբ: Դրանք՝ ընդլայնում են աշխարհընկալումը, հարստացնում ճանաչողական գիտելիքները, զարգացնում բառապաշարը, ձևավորում հետաքրքրասիրությունը, ինքնաճանաչումը, ինքագործունեությունը և նախաձեռնողականությունը դաստիարակում են սեր դեպի բնությունը, դեպի հայրենի երկիրը, դրանց տեսարժան վայրերեը, հուշարձանները ձևավորում են գեղագիտական ճաշակ, նպաստում են միջնանձնային հարաբերությունների Ճևավորմանը:

Բացի վերը նշվածից, կազմակերպված և անցկացված էքսկուրսիաները ինքնին ախտորոշման այնպիսի կախարդական միջոց են, որի օգնությամբ կարելի է, շատ լավ դիտարկել և շտկել երեխաների վարքի խնդիրները, որոնք միշտ չէ, որ տեսանելի են սովորական պարապմունքների ժամանակ: Սա հիանալի միջոց է սաների դիտարկման և գնահատման մեթոդը կիրառելու համար: Էքսկուրսիայի ընթացքում՝ տեսանելի են յուրաքանչյուր սանի և ամբողջ մանկական թիմի առանձնահատկությունները: Հենց էքսկուրսիայի ժամանակ, երբ երեխաները չեն գտնվում իրենց սովորական միջավայրում կարելի է նկատել նան դաստիարակի մասնագիտական գործունեության թերությունները, գնահատել՝ մանկավարժական վարպետությունը:

ԳԼՈՒԽ 2 ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՏՈՒՆ- ԹԱՆԳԱՐԱՆ

Հաշվի առնելով էքսկուրսիաների ու հայրենասիրական ուղղվածության այցերի կարևոր նշանակությունը նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակության համար՝ սույն տարվա հոկտեմբեր ամսին իրականացվեց էքսկուրսիա դեպի Սիսիան համայնքի Լոր բնակավայր: Այցը բավականին բովանդակալից էր և ուսուցողական:

Նախքան էքսկուրսիան, նախորդ պարապմունքների ժամանակ երեխաները ստացել էին նախնական գիտելիքներ մեր հայրենակից, անվանի բանաստեղծ Համո Սահյանի մասին: Նույնիսկ այս տարվա ապրիլի 14-ին, կազմակերպեցինք փոքրիկ ցերեկույթ, նվիրված բանաստեղծի109 ամյակին:

Ներկայացնում եմ ուսումնաճանաչողական էքսկուրսիայի ընթացքը:

Խումբ՝ ավագ,

Ոլորտը՝ խոսքի զարգացում,

Տեսակը՝ ուսումնաճանաչողական էքսկուրսիա,

Նպատակը՝ երեխաների մոտ առաջացնել սեր հայրենի երկրի, հայ ժողովրդի մշակութային անվանի ներկայացուցիչների հանդեպ, ինճպես նաև տեսական գիտելիքները ակնառու - պատկերավորի վերածելու համար:

Ընթացքը՝ Վերը նշեցի , որ նախքան էքսկուրսիան երեխաները ունեին նախնական գիտելիքներ բանաստեղծի կյանքի և նրա ստեղծագործություններից որոշների մասին:

Ծնողների աջակցությամբ խմբի 2 դաստիարակներս, մեթոդիստ Իրինա Բադամյանը, նաև տնօրեն տիկին Լ. Հակոբյանը ամենայն ուշադրությամբ երեխաներին տեխափոխեցինք Լոր բնակավայր: Ճանապարհը բազմազան էր և գունագեղ, ածունը գեղեցիկ վրձնահարվածներ էր կատարել ճամփեզրի բնության վրա:

Սաներին սիրով հյուրընկալեց գրողի կյանքը, ստեղծագործական ուղին ներկայացնող Քնքուշ Հարությունյանը:

Ավագ խմբի սաները հիացմունքով շրջեցին Սահյանի թանգարանում, նստեցին բանաստեղծի թախտին, տեսան նրա անձնական օգտագործման իրերը, որոնք խնամքով դասավորված էին : Կարևոր է ուշադրություն դարձնել նաև, որ երեխաները ծանոթացան թանգարանային կանոններին՝ չաղմկել,ձեռքով ճդիպչել ցուցանմուշներին և այլն:

Այն երեխաները, որոնք սկզբում անտարբերություն էին ցուցաբերում, այդքան էլ ուշադիր չէին, ընթացքում ակտիվացան և սկսեցին պատասխանել հարցերին:

Սաները հանդես եկան իրեց սովորած բանաստեղծություններով, ակտիվ ներկայացրին իրենց գիտելիքները: Նրանք դեռ երկար կհիշեն այդ հրաշալի օրը, որը լցված էր մեծն պոետ Համո Սահյանի պոեզիայով:

Հաջորդիվ բնության գրկում ժամանցի ընթացքում, սաների հետ խմբային քննարկումների ժամանակ, վերջիններն ամփոփեցին իրենց տպավորությունները: Գիտելիքներն ամբողջացնելու համար նրանց տրվեցին ամփոփիչ հարցեր:

- Որտե՞ ղ ենք մենք գտնվում:
- Սա ո՞ր գյուղն է:
- Ու՞մ տուն – թանգարանն է գտնվում այստեղ:
- Ո՞վ է Համո Սահյանը:
- Ի՞ նչ սովորեցիք այսօր:
- Ի՞ նչն ամենաշատ հետաքրքրեց :
- Կցանկանայի՞ ք կրկին այցելել այստեղ:
- Սիրու՞ մ եք ձեր հայրենիքը:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ մեր նախնական նպատակին մենք հասանք: Սաները, բնության գրկում ժամանց ու հանգիստ վայելելուն զուգահեռ, ծանոթացան Սահյանի տուն թանգարանին, շրջեցին ու ծանոթացան մեր հայրենիքի գողտրիկ անկյուններին: Արդյունքում՝ դարձան ավելի հայրենաճանաչ ու հայրենասեր: Կարծում ենք, որ նմանօրինակ այցերն ու էքսկուրսիաները պետք է կրեն հաճախակի բնույթ, որպեսզի մատաղ սերունդը էլ ավելի մոտենա մեր մշակույթին, ավանդույթներին ու պատմությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, թեմայի շրջանակներում կատարելով հետազոտական աշխատանք հանգեցի հետևյալ եզրակացությանը.

- ✓ նախադպրոցական ուսումնական հաստատությունում էքսկուրսիաները և մշակութային այցերը մանկավարժական գործընթացի կարևոր մասն են,
- ✓ դրանք այցելություն են դեպի բնության գիրկ, տեսարժան վայրերը, զրադարաններ, թանգարաններ, արտադրամասեր և այլն ուսումնադաստիարակչական նպատակներով,
- ✓ այս պարագայում ստացվող տեղեկացումն լինում է առավել տպավորիչ, հուզական, մնայուն, որովհետև փոխանցումն իրականացվում է անմիջական շփման և հաղորդակցման միջոցով :
- ✓ Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում են էսթետիկ զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, դաստիարակում են հարգանք ուրիշների աշխատանքի նկատմամբ, հայրենիքի նկատմամբ, ընդլայնում են սաների մտահորիզոնը, ձևավորում աշխարհայացքը, նպաստում՝ խոսքի զարգացմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Տնօրենի եզրակացություն: Անմիջապես ներկա գտնվելով և ականատեսը լինելով էքսուրսիայի պլանավորման և անցկացման ընթացքին հանգեցի հետևյալ եզրակացությանը՝ կարևոր և անհրաժեշտ է դաստիարակների կողմից նման էքսկուրսիաների անցկացումը, որը իր հետքը թողեց երեխաների աշխարհհայացքի ձևավորման, միջավայրում բարեկիրթ վարքի դրսևորման և իմացական ոլորտի զարգացմանը:

Մեթոդիստի դիտարկում: Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը մեծ կարևորություն ունի երեխաների զարգացման գործում: Էքսկուրսիան անցավ դաստիարակների մեծագույն ուշադրության ներքո, առաջնահերթություն համարելով անվնաս յուրաքանչյուր սանի տեղափոխումն ու հետ վերադարձը: Նկատվեց դաստիարակի կատարած հսկայական աշխատանքը, քանի որ սաների վարքը ցույց տվեց ,որ նրանք տեղեկացված էին թանգարանային կանոններից: Ինչպես նաև հանդուրժել և համբերատար սպսել իրենց ուղղված հարցին, պատասխանել գեղեցիկ և ոսկեղենիկ հայերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայեցակարգ» գիտական և մեթոդական էլեկտրոնային ամսագիր.

URL՝ http://e-koncept.ru/2016/76560.htm:

2. Ушинский - "Собрание сочинений".(1948г.стр.333).

3. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014թ

4. Լարիսա Մորոզովա «Ինչպես ճիշտ և հետաքրքիր անցկացնել էքսկուրսիան մանկապարտեզում» URL՝ https://mclkic.net/zanyatiya-s-detmi/konspekt-ckskursii-v-sredney-grupp.html

5. Կամենևա Լ.Ա. «Մանկապարտեզում երեխաներին բնությանը ծանոթացնելու մեթոդները»

6. Կոնդրաշովա Մ.Ա. «Նախադպրոցականների էկոլոգիական կրթությունը պարապմունքներին և առօրյա կյանքում». Մեթոդական ուղեցոույց. 1991 թ։

ՀԱՎԵՐՎԱԾ